Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ի
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-Ե-
7 ապրիլի 2023թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ **ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Խաչատրյան,

Սույն թվականի **ապրիլի 6-ին** ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է թիվ ՇԴ/1941/02/23 (2-9/2022) քաղաքացիական գործն ըստ հայցի Էվելինա Այգեյչևայի ընդդեմ Լևոն Գրիգորյանի՝ ընդհանուր անչափահաս երեխայի ապրուստը հոգալու համար ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի կարգով ենթակայության մասին վեճը լուծելու համար գործը ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Ձեր՝ **2023 թվականի փետրվարի 28-ի որոշումը**:

Վերոնշյալ որոշմամբ, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ **«Ընդդատության և ենթակայության մասին վեճերը»** վերտառությամբ 26-րդ հոդվածին, Դուք ներկայացրել եք հիմնավորումներ ու փաստարկներ բացառապես Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայազորային զինվորական դատարանի կողմից վերը հիշատակված քաղաքացիական գործը **ընթացակարգային պահանջների ենթադրյալ խախտմամբ** ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու վերաբերյալ, մինչդեռ գործի

նյութերի ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստելու, որ հիշյալ քաղաքացիական գործը, հետագա ընթացքը լուծելու համար, ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ուղարկվել դեռևս 2023 թվականի փետրվարի 15-ին՝ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարի կողմից:

Բացի այդ, հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իրավակարգավորումներից ուղղակիորեն հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին է վերապահված **Հայաստանի Հանրապետության դատարանների միջև գործերի ընդդատության և ենթակայության վերաբերյալ վեճերի լուծման իրավասություն:** Մինչդեռ, տվյալ դեպքում Ձեր կողմից կայացված որոշման շրջանակներում չի ներկայացվել սույն գործի ենթակայության վերաբերյալ Ձեր դիրքորոշումն ու ըստ այդմ՝ անհամաձայնությունը, որով կհաստատվեր հիշյալ քաղաքացիական գործի ենթակայության վերաբերյալ ՀՀ դատարանների միջև որևէ վեճի առկայություն:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով, որ Ձեր կողմից բարձրացված խնդրո առարկա հարցի քննարկումը դուրս է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով վերապահված լիազորությունների շրջանակից, վերադարձվում է թիվ ՇԴ/1941/02/23 (2-9/2022) քաղաքացիական գործը՝ **ողջամիտ ժամկետների պահպանմամբ** հետագա ընթացքը լուծելու համար:

Առդիր՝ թիվ ՇԴ/1941/02/23 քաղաքացիական գործը (4 հատոր):

Հարգանքով՝ **ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**